

## ԿԱՐԾԻՔ

Մարինե Ղազարյանի «Հակոբ Օշականի փոքր արձակը (հոգևորի և բնագոյայինի խնդիրը)» թեմայով թեկնածուական ատենախոսության մասին

Մարինե Ղազարյանի աշխատանքը նվիրված է հայ գրականության երևելի ու բարդ հեղինակներից մեկի՝ Հակոբ Օշականի գրականության մի շատ կարևոր հատվածի՝ փոքր արձակի ուսումնասիրությանը: Այն ուշագրավ տեղ է գրավում հեղինակի ստեղծագործության մեջ նրանով, որ շոշափած հարցերի շրջանակով նախակադապար է հանդես եկել հեղինակի առավել ծավալուն գործերի համար: Ավելի վաղ 1910-1920-ական թվականներին արձակի փոքր ձևերում արտահայտված թեմաներն են, որ մեծ ծավալումներ են գտնում հեղինակի 1930-1940 թթ. վիպային գործերում: Մի առումով, ուրե՛ս, Օշականը հեռուն չի գնում, մտում է իրեն հուզող խնդիրների շրջանակում՝ ծավալելով դրանք առավել մեծ համատեքստի մեջ:

Օշականի գրականության մեջ պատկերված աշխարհը արևմտահայ գյուղն է, այն կազմավորող բարքերն ու սովորությունները, որոնք կենդանի կերպով արտահայտվում են հերոսների բնավորության ու կենսաձևերի մեջ՝ պայմանավորելով նաև նրանց կյանքն ու ճակատագիրը: Սա է, որ Օշականը կոչում է «բարեխառնություն», այլ կերպ ասած՝ բարքեր, և սրա մանրակրկիտ պատկերմանն է նվիրված նրա գրականությունը, որն ի հայտ է բերում նաև գյուղաշխարհի բարքերի ու մարդկային ճակատագրերի միջև բարդ, հաճախ այլասերող հարաբերությունները: Ինքը՝ ատենախոսն էլ կարծես շատ չի հեռացել հեղինակին հետաքրքրող հարցերի շրջանակից, երբ աշխատանքը սահմանափակել է ուսումնասիրվող հեղինակի փոքր գործերում «հոգևորի և բնագոյայինի» քննությամբ: Թե ինչ է նկատի առնում ատենախոսը սրա տակ, նա փորձում է ցույց տալ իր աշխատանքի տարբեր հատվածներում՝ նույն հարցը տարբեր հարթություններում շոշափելով:

Այսպես, աշխատանքի առաջին գլուխը նվիրված է Օշականի պատկերած գյուղաշխարհի բարքերի ու սովորությունների, երկրորդը այնտեղ ապրող հերոսների, Օշականի գրականության մեջ առանձին անվանում ստացած քոքուրների բնավորության և երրորդը՝ ցեղասպանության թեմայի հայտնությանը Օշականի գրականության մեջ: Եթե առաջին գլխում ատենախոսը հոգևորն ու բնագոյայինը դիտարկում է որպես որոշակի կայունությամբ արտահայտվող ամրագրված ժողովրդական սովորությունների ու կենսաձևերի արտահայտություն, երկրորդում այն երևում է հերոսների սիրասեռային ու հասարակական հարաբերությունների փոխհարաբերության հարթության մեջ, իսկ երրորդում՝ այսպես ասած բարձր մարդկային և հոգևոր արժեքներ կրող նահատակվող հայի ու բարբարոս թուրքի միջև արմատապես հակադիր հարաբերություն:

Այս համատեքստում առավել հաջող է թվում աշխատանքի երկրորդ՝ հերոսների սիրասեռային և գենդերային հարցերին նվիրված հատվածը: Ակնհայտ է, որ ատենախոսության հեղինակն այստեղ փորձել է Օշականի «խոտորված» հերոսների վարքագիծը քննել սոցիալականորեն ըմբռնված գենդերի և անկասելի ներքին մոլուխների հակասության մեջ՝ այս ճանապարհին փորձելով շոշափել հերոսների սեռականության ինչպես բնական, այնպես էլ սոցիալական ասպեկտները: Հեղինակը դա արել է՝ փորձելով հենվել ժամանակակից տեսությունների տրամադրած հնարավորությունների վրա:

Մրա կողքին աշխատանքի առաջին գլուխը, որը նվիրված է Օշականի գյուղաշխարհի և նրա գրականության առանցքը կազմող բարքերի քննությանը, ատենախոսը ծավալել է ավելի շատ մտալով Օշականի տեքստի տրամադրած հնարավորությունների շրջանակում՝ հաճախ վերարտադրելով հեղինակի ասածները: Հայ գյուղաշխարհի հասարակական-մշակութային կյանքն իր թե՛ ընդհանուր հատկանիշներով, թե՛ տեղական առանձին դեպքերով հետաքրքրել է 20-րդ դարասկզբի ազգագրագետներին և այս մասին հսկայածավալ նյութ կարելի է գտնել Գարեգին Լևոնյանի հրատարակած «Ազգագրական հանդես»-ի էջերում: Այնտեղ կարելի է գտնել նաև և հատկապես նահապետական ընտանիքի և գերդաստանային կացութաձևերի մասին հարուստ մարդաբանական վերլուծություններ, նյութ, որը ինչպես Օշականի գրականության ատաղձն է, այնպես էլ հետաքրքրել է ատենախոսին, քանի որ նա անդրադառնում է այս հարցերին աշխատանքի առաջին գլխում: Եվ ի վերջո, աշխատանքի երրորդ գլուխը, որն ավելի շատ ժանրով պայմանավորված, քան թեմատիկ զարգացմամբ է կապվում ընդհանուր աշխատանքին, թեև ատենախոսը ջանք ու եռանդ չի խնայում այն նախորդ հատվածներին կապելու հարցում:

Ատենախոսի հայացքում Օշականի գրականությունն առավելապես միտված է ի հայտ բերել մարդկային ու ազգային կյանքի խորքային դրամա, որը, ըստ նրա, բնորոշում է մարդուն առհասարակ և հայությանը՝ մասնավորապես: Մա մի հարց է, որը Ղազարյանը հետամտում է ցանկացած պարագայում: Այդպես են նրան ներկայանում թե՛ ճակատագրի բերումով կամ ի ծնե «զարկված» Օշականի հերոսները, թե՛ ազգային մեծ աղետին նվիրված Օշականի մտորումները: Ատենախոսն այս հարցում հետևողական է: Աշխատանքի տարբեր հատվածներում նրա հետազոտական հայացքը երևում է որոշակի ճշգրտությամբ, իսկ քննության առարկա հարցը ծավալվում վերլուծության տարբեր հարթություններում: Այդ կերպ նա փորձում է հարաբերել հետազոտական խնդիրը՝ «հոգևորի և բնագոյայինի խնդիրը», և դրան մոտենալու իր որդեգրած դիտանկյունը՝ Օշականի փոքր արձակում արտահայտված դրամատիզմը որպես մի ամբողջություն: Անկախ նրանից, թե որքանով ենք մենք համաձայն ատենախոսի մոտեցումների և որդեգրած դիտանկյան հետ, չենք կարող չնկատել, որ ատենախոսության հեղինակն արել է առավելագույնը գիտական

ուսումնասիրության համար խիստ անհրաժեշտ այս երկու նախադրյալներն ապահովելու համար՝ միննույն ժամանակ որոշակի հետևողականություն ցուցաբերելով այս երկուսի ծավալման մեջ:

Այսքանը գնահատելով հանդերձ աշխատանքի ընթերցումը մեզ առերեսել է երկու հիմնական մեծ խնդրի, որոնք չենք կարող չքննարկել ատենախոսի հետ:

Թեև Ղազարյանը բավականին հետևողական է Օշականի շուրջ ստեղծված պատմագրությունն իր աշխատանքում ներառելու հարցում (նրա ուշադրությունից չի վրիպել որևէ աշխատանք, որը նվիրված է Օշականի գրականության այս կամ այն կողմի քննությանը, դրանք խնամքով ներկայացված են նաև աշխատանքի վերջում տեղակայված մատենագիտության մեջ), բայց նա բավականին անփույթ է գտնվել դրանք համակարգված ներկայացնելու, ինչպես նաև եղած տեսակետները վիճարկելու կամ հաստատելու հարցում: Այսպես, աշխատանքի Ներածության մեջ նա ոչ ամբողջությամբ է անդրադարձել Օշականի գրականությանը նվիրված ուսումնասիրություններին՝ բավարարվելով միայն մի քանիսով՝ ժնացածին անդրադառնալով ատենախոսության տարբեր հատվածներում: Սա էական բացթողում չէ, թեև Ներածության մեջ հարցի պատմությունն ավելի համակարգված ներկայացնելու դեպքում գուցե ատենախոսն ինքը հնարավորություն ձեռք բերեր ավելի հստակ ձևակերպել իր տեսական մտեցումները:

Հարցն այն է, սակայն, որ հաճախ Օշականին նվիրված պատմագրությունը ատենախոսի աշխատանքի մեջ հայտնվում է անքնին կերպով: Այլ ուսումնասիրողներից արված մեջբերումները հաճախ կապվում են ատենախոսի որևէ մտքի հետ, բայց հրնթացս անտեսվում է այն ամբողջ համատեքստը, որից վերցվում է հատվածը: Միայն մի օրինակ հիշատակենք: Էջ 104-ում Մարկ Նշանյանից արված մի կարճ մեջբերման ենք հանդիպում «Մեհյան» հանդեսի մասին, որտեղ հեղինակը հղում է պարբերականի գրական ծրագրին՝ նկատելով, որ իր վերնագրով իսկ շարժումը հղվում էր հայ կամ հույն աստվածներին: Նշանյանի միտքն այն է, որ «Մեհյան» հանդեսը, հղվելով «հին» աստվածներին գրականությամբ նոր կրոն հիմնելու հայտ էր ներկայացնում: Այս մասին Նշանյանն ավելի հանգամանալից խոսում է իր «Գրական կանգնումի խնդիրը» հոդվածում («Կամ», թիվ 3-4, 1986, էջ 193-251): Ղազարյանը Նշանյանի միտքը ներբերում է առանց վիճարկելու կամ բացատրելու, թե ինչ է նկատի առել նա, և միանգամից տեղափոխում իրեն հետաքրքրող հարթություն՝ կապելով դա նախ «Մահուան ծաղիկներ» շարքի հետ, ապա նկատելով, որ միֆակիրառությունը բնորոշ է Օշականին:

Այսպիսի դեպքեր կարելի է հանդիպել աշխատանքի տարբեր հատվածներում, ինչը խոսում է մի կողմից՝ ատենախոսի բանիմացության, Օշականի շուրջ ստեղծված հարուստ պատմագրությանը ծանոթ լինելու մասին, մյուս կողմից՝ աշխատանքը խոցելի է դարձնում մեթոդաբանական առումով: Հետազոտական նյութի հետ

աշխատելու ատենախոսի եղանակն այնպիսին է, որ ստիպում է մեզ մտածել, թե ատենախոսը հաճախ ելնում է իր կանխադրույթից, քանի նյութի տրամադրած հնարավորություններից: Տարված լինելով իր կանխադրույթով՝ նա կարող է չնկատել, որ վիճարկում կամ ակամայորեն հաստատում է մի բան, որը վիճարկման կամ հաստատման կարիք չունի: Օրինակ՝ էջ 102-103-ում նա փորձում է վիճարկել Չուրխուտյանի կարծիքն այն մասին, որ «Մահուան ծաղիկները» շարքում տեղ գտած գործերը «տպավորապաշտ» են: Չուրխուտյանը նկատի ունի այն, որ դրանք անմիջական տպավորությամբ, հուզականորեն վերարտադրված պատկերներ են հաճախ: Սա մի դիտարկում է, որն իր գրականության մասին անում է նաև Օշականը տարբեր առիթներով: Ղազարյանը մասամբ վիճարկում է Չուրխուտյանի մոտեցումը՝ նկատելով, որ ճիշտ չէ պատկերների բանաստեղծականությունից բխեցնել «խմբրեսիոնիզմի գեղարվեստական մեթոդի հիմնավորումը»: Ղազարյանն իհարկե ճիշտ է: Սակայն, Ղազարյանը, Չուրխուտյանի դիտարկումը վիճարկելով, փորձում է պաշտպանել Օշականին: Օշականից արված մեջբերումներով նա ակամայորեն հաստատում է, որ Օշականը... տպավորապաշտ է, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես են Օշականի աշխատելաեղանակում տպավորություններից եկած անմիջական, զգայական վերարտադրությունները մեծ տեղ գրավում: Ստացվում է այնպես, որ վիճարկումն ու հաստատումը նույն բանն են ասում: Ատենախոսն անփոփում է հատվածն այնպես, որ ցույց է տալիս, թե Օշականը դա անում է իրականության ու մարդկային ապրումների հակադրությունը սրելու նպատակով: Միտք, որին կարելի էր հասնել նաև Օշականի գեղագիտական ըմբռնումները քննարկելու ճանապարհով:

Մեր հիմնական դիտարկումն այն է, որ Ղազարյանը գուցե չհայտնվեր նման ծուղակներում, եթե իր համար խնդիր դարձներ նյութի անաչառ քննությունը և ոչ վաղօրոք դրված կանխադրույթը հաստատելու վճռականությունը: Ստացվում է այնպես, որ այն, ինչը կարևոր նախադրյալ է գիտական հետազոտության համար և որը գնահատելի է նաև այս աշխատանքի դեպքում, ակամայորեն խոցելի է դարձնում աշխատանքը ուսումնասիրողի անփորձության պատճառով: Մեր համոզմունքն այն է, որ հետազոտական փորձի վաղ փուլում է, որ հետազոտողը կարող է հեռանալ նյութի տրամադրած հնարավորություններից՝ տարվելով իր կանխադրույթով և խարսխափելով այն հետևողականորեն առաջ տանելու ձևերի մեջ: Սրան կարծես գիտակից է նաև ատենախոսը, քանի որ աշխատանքի Ներածության մեջ խոսելով այն մասին, որ իր կատարած աշխատանքը առաջին համապարփակ գործն է՝ նվիրված Օշականի փոքր արձակի նորոշակի դիտանկյունից (էջ 11)՝ միննույն ժամանակ ցույց է տալիս, որ որպես ուսումնասիրող դեռ խարսխափում է տարբեր մեթոդաբանությունների մեջ: Նա 6-7 մեթոդաբանություն է նշում իր ուսումնասիրության համար, որոնց հարկ եղած դեպքում դիմում է շարադրանքի տարբեր հատվածներում, երբեմն ոչ սկզբնաղբյուրների, այլ միջնորդավորված գրականության մակարդակով (օրինակ՝ էջ 74):

Հետազոտական նյութը հավաքելու, դրան տեղյակ լինելու, տեսական մոտեցումներ մշակելու Ղազարյանի ջանքը մեզ հուշում է, որ այս աշխատանքի սահմաններում դրված հարցերը, որոնք առանցքային հարցեր են Օշականի գրականության ուսումնասիրության համար, առավել մշակված եղանակներով նա կարող է ծավալել հետազայում: Ուստի, նկատի առնելով այն, որ ատենախոսը աչալուրջ ու հետևողական է գիտական աշխատանքի համար կարևոր նախադրյալների՝ հետազոտական խնդրի և հետազոտական հայացքի հարցում, միջնորդում ենք ԵՊՀ-ում գործող 012 մասնագիտական խորհրդի առջև՝ շնորհելու նրան իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Հավելենք նաև, որ գիտական մամուլում Ղազարյանի հրատարակած հոդվածները արտացոլում են ատենախոսության մեջ շոշափված հիմնական հարցերը, իսկ սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Պաշտոնական գրախոս՝

*Handwritten signature*

Սիրանուշ Դվոյան  
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

19.06.2023

*Handwritten text: Բ. Գ. Բ. Դ. Սիրանուշ Դվոյան*

*Handwritten text: Կրթության նախարարության ԵՊՀ:*

*Handwritten text: Գիտությունների ակադեմիայի ԵՊՀ:*



*Handwritten text: Գիտությունների ակադեմիայի ԵՊՀ:*

*Handwritten text: Գիտությունների ակադեմիայի ԵՊՀ:*

*Handwritten text: 19.06.2023 թ.*